

## ԶԻԱԿԱՍԿԻ ՏՆԿԻՆԵՐԻ ԱՆՂՈՂ ԱՃԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ ԳԱԱ Գ.Ս. Գավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Սովորական ձիակասկը (*Aesculus hippocastanum* L.) ձիակասկազգիների ընտանիքին պատկանող տերևաթափ ծառ է, որի բարձրությունը հասնում է մինչև 30մ, իսկ բնի հաստությունը՝ 2մ: Հայտնի է 25 տեսակ, որոնց աճում են Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում: Նախկին ԽՍՀՄ-ում վայրի տեսակներ չեն հանդիպում, կան 13 կուլտուրական տեսակներ, որոնցից ամենատարածվածը ձիակասկ սովորականն է, որն ապրում է 200-300 տարի:

Ձիակասկը համարվում է բարձրորակ, խոշոր, սպիտակ, գեղեցիկ ծաղկափթթություններով դեկորատիվ ծառատեսակ: Այն զարդարում է քաղաքների փողոցներն ու պուրակները: Կարելի է լայնորեն օգտագործել մեր հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերում, սակայն Արարատյան դաշտի պայմաններում նկատվում են տերևների այրվածքներ, ինչն օդի հարաբերական խոնավության պակասի հետևանք է: Այդ պատճառով այն պետք է տնկել համեմատաբար խոնավ վայրերում:

Ձիակասկն օգտագործվում է նաև բժշկության մեջ: Բուժական նպատակով, հիմնականում, օգտագործվում են ձիակասկի սերմերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ գլիկոզիդներ, կուներիններ, դաբաղանյութեր, ճարպալուղեր և այլն, իսկ տերևները պարունակում են մոտ 56մգ % վիտամին C:

Ձիակասկը բազմաճում է սերմերով և պատվաստով, սերմերը կարելի է ցանել աշնանը և գարնանը (ստրատիֆիկացիայից հետո):

Մեր փորձերում ձիակասկի սերմերը ցանվել են գարնանը՝ 40սերմ/մ<sup>2</sup> խտությամբ, որպես լցանյութ օգտագործվել են հրաբխային սև խարամը և գլաքարի ու կարմիր խարամի 1:1 խառնուրդը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիդրոպոնիկայի պայմաններում, առաջին տարում երկու լցանյութերում էլ աճը եղել է դանդաղ, բարձրությունը կազմել է 16-18սմ, բնի տրամագիծը՝ 12-13մմ: Երկրորդ տարում ծառաչափական ցուցանիշները կազմել են. հրաբխային սև խարամում բույսի բարձրությունը՝ 54,2սմ, բնի տրամագիծը՝ 23,6մմ, գլաքարի ու կարմիր խարամի խառնուրդում՝ 45,3սմ և 21,8մմ, համապատասխանաբար: Տնկիների ելը 1մ<sup>2</sup>-ից կազմել է. հրաբխային սև խարամում՝ 32, գլաքարի ու կարմիր խարամի խառնուրդում՝ 26 հատ:

Այսպիսով, բացօթյա հիդրոպոնիկայում, երկու տարում, հնարավոր է տարբեր լցանյութերի դեպքում, 1մ<sup>2</sup> մակերեսից, ստանալ հզոր արմատային համակարգ ունեցող ձիակասկու 26-32հատ լիարժեք հիդրոպոնիկ տնկիներ: Հետազոտությունները շարունակվում են:

Hovsepyan A.H., Eloyan S.A., Mairapetyan Kh.S.

### POSSIBILITY OF SOILLESS CULTIVATION OF AESCULUS

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems NAS RA Yerevan

#### Summary

Studies have shown that it is possible to get 26-32 complete hydroponics *Aesculus* saplings from a unit surface of volcanic black slag substrate, with a strong root system with 54,2cm height and 23,6mm trunk diameter in the open-air hydroponics in two years.